

բռնութեամբ: Միթէ՞ դու միայն պիտի բնակիս երկրիս վրայ: Տեսնէ Տէր եւ դատէ իւր արդարութեամբ ինչպէս ես կը յուսամ»:

Եւ իմանալով թէ հայրը մէկ կողմանէ՝ եւ միւս կողմանէ Դերենիկ Անձեւացեաց գաւառին վրայ կը յարձակէին, իւր եղբորորդին Գրիգոր՝ քաջ երիտասարդը դրկեց Աշոտի դէմ երկու հարիւր հոգուոյ ընտիր սպառազէն գնդով, իսկ սա՝ տեղեկանալով Գրիգորի զօրաց սակաւութիւնը արհամարհեց եւ անզգոյշ կը նստեր անհոգ, երբ գիշերով յանկարծ Անձեւացի խումբը յարձակեցաւ իւր վրայ, զարկաւ՝ ցիրուցան ըրաւ զօրքը եւ անար առաւ բոլոր բանակը մինչ ինք Աշոտ միաձի փախստական կ'իջներ Ռշտունեաց ոստանը:

Իսկ Դերենիկ իմանալով հօրը պարտութիւնը եւ թէ Գուրգէն իւր վրայ կ'ուզար յարձակմամբ՝ խոհեմաբար ետ քաշուեցաւ եւ դարձաւ Վասպուրական:

Կրկին եւ կրկին Արծրունիք նոր զօրք ժողուելով եւ Բագրատունեաց օգնութեամբ զօրացեալ՝ չի կարենալով բան մը գլուխ հանել, խաղաղութեան դաշինք դրին. Աշոտ եւ Գուրգէն առանձին իրարու հետ տեսուեցան, զիրար ողջունեցին եւ բարեկամութեան սեր հաստատելով բաժնուեցան իրարմէ:

Գուրգէնի ամուսնութեան տարին լրացել էր, Յեղինէ կայտառ՝ Նորածին, Նորակնունք երեխայ մը գիրկը՝ միսիթարուած էր իւր Մուշեղէ ունեցած խեղճ եւ տկար տղուն մահուան վրայ. Խոսքով Ակեացի, որ Նոցայ կնքահայրն էր եւ Նոյն օրն այդ պաշտօնը կատարելու համար եկեր էր ի Կանգուար, երեքին վրայ կը նայէր զուարճութեամբ. իսկ Գուրգէն ոտքի վրայ կանգնած, ուրախ, բոլոր նեղութիւնները եւ բախտին հարուածները գրեթէ մոռցել էր ներկա երջանկութեամբ. մէկ մը կնոջը եւ մէկ մը զակկին ակնարկ ձգելով աչքերը երկինք կը վերցնէր շնորհակալ կը լինէր աստուծոյ տուողին ամէն բարութեանց, երբ յանկարծ գլուխը դարձնելով տեսաւ Վահրիճ, որ լռիկ ներս մտած դռան առջեւ կեցել էր:

— Ի՞նչ է Վահրիճ, դու բան մը ունիս զրուցելու,— հարցուց Գուրգէն: